հրամայեց նրան նույնպես գլխատել: Այդպես արեց բոլորի նկատմամբ, որոնք մտածեցին նրա մահը: Ավելի քան տասնհինգ մարդ նույն օրը սպանեց որևէ մեկի չհմացնելով: Եվ այսպես ոչնչացրեց իր նկատմամբ բոլոր չարագրգիռներին:

ԳԼՈՒԽ ԻԴ
ՇԱՀ ԱԲԱՍ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՀԸ

Թեպետ Շահ Աբաս թագավորը ուներ շատ երկրներ ու քաղաքներ, բայց նա ամեն երկրից ավելի սիրում էր Ֆահրապատը և Աշրափ քաղաքը: Եվ երբ պատերազմից ազատ էր լինում, գնում էր Աշրափ և այնտեղ հանգստանում և այնտեղ էր լինում: Այնպես եղավ, որ Բաղդադի գրավումից հետո եկավ Սպահան, բայց այնտեղ երկար չմնաց, այլ գնաց Ֆահրապատ՝ Աշրափ քաղաքը և մահու հիվանդությամբ տկարացավ: Նա իմացավ, որ այդ տկարությունն իր մահն է և դրանից չի ազատվելու: Իր թոռին մոտը կանչեց, որ Սաֆի-Միրզայի որդին էր և անունն էլ Սաֆի. սրա հետ կանչեց նաև տերության խնամակալին, որի անունն էր Սարուբաղի, նաև Սաֆի խանին, որ Բաղդադի իշխանն էր: Այդ ժամանակ եկել էր շահին տեսության և այնտեղ էր: Սրանց առջև կանչեց իր թոռին և ասաց՝ որդյակ, ես քո հորը սիրեցի, որ նա իմ տեղը թագավոր լինի, իսկ նա կամեցավ սրով ինձ մեռցնել, այդ պատճառով ինքը ընդունեց այն մահը, և դու եղիր այս թագավորության ժառանգը: Լսիր, ինչ որ կասեմ, անսա ինձ, մինչև որ մեռնեմ, դու գնա Սպահան և այնտեղ թագավորիր, իսկ նրանց, որ իմ հրամանով իշխաններ են ու գործակալներ, վերացրու մեջտեղից, որպեսզի չդավեն քեզ: Այս Սաֆի խանին ուղարկիր իր տեղը, թող գնա Բաղդադ, իսկ այս Սարուբաղին լինի քեզ դաստիարակ և խրատատու: Ինչ որ սա ասի, դու լսիր սրան: Այսքան խոսք ասաց և մի քանի օրից հետո մեռավ 1078 (1629) թվին՝ թագավորելով հիսուն տարի:

ԳԼՈՒԽ ԻԵ
ՇԱՀ ՍԱՖԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակն է խոսելու այս Սաֆի թագավորի մասին, քանզի Շահ Աբասի մահվանից քառասուն օր հետո սրա թոռ Սաֆին գնաց Սպահան արքունի խնամակալ Սարուբաղիի և Սաֆի խանի հետ ու այնտեղ թագավոր դարձավ: Եվ երեք օր մունետիկը, որ ջառչին է, գոչում էր, թե ահա թագավոր եղավ շահ Սաֆին, բոլորդ լսեք և զգուշացեք: Իր թագավորելու սկզբին շահ Սաֆին տասներեք տարեկան էր, քանզի թեպետ տարիքով դեռ մանուկ էր, սակայն գիտությամբ կատարյալ էր, շատ խելոք էր և քաղցրախոս. ինչ որ ասում էր, հաճելի էր լինում լսողների համար, և ոչ ոք իր մտքում նրան չէր պախարակում, որովհետև ոչ ոքի դժվարին չէր թվում նրա ասածը, այդ պատճառով սիրում էին նրան նրա խելոքության համար: Օրերից մի օր իր հետ վերցնելով Սաֆի խանին, մտավ ծաղկանոց: Մտքում պահում էր իր պապ Շահ Աբասի ասածները: Նայելով ճանտարի ծառին, որ սոսին է, ասաց՝ սրանք չափազանց երկայն են և հաստ, պետք է հատել և տնկել նոր տնկի, որպեսզի լավ աճեն:

Սաֆի խանը հասկացավ խոսքի իմաստը, քանզի (շահ Սաֆին) կամենում է Շահ Աբասի պատվիրանը կատարել: Սաֆի խանը ասում է. «Այո, արքա, լավ ասացիր, արա, ինչպես ասացիր»: Եվ ծնկի եկավ, պարանոցը կորացրեց և ասաց՝ քո ծառան եմ, նախ ինձ հատիր: Շահը ասաց՝ դու կտրելու ծառ չես, գնա քո տեղը: Եվ ապա թուրը հանելով երեք անգամ մեկնեց պարանոցին, բայց չմոտեցրեց նրան: Ասաց՝ համարիր քեզ հատված և թուրը դրեց պատյանը: Իսկ Սաֆին ելավ, համբուրեց շահի ոտքերը:

Ապա մեկ-մեկ կանչեց բոլոր մեծամեծներին և կոտորեց ամբողջ ավագանին, գործակալներին, մինչև իսկ ավելածուներին, աղբաթափներին և հավապահներին: Եվ այսպես սպառեց բոլոր իշխաններին: Նախ Ղողչիբաշուն և այլոց, ինչպես ասացինք:

Նա մի հորաքույր ուներ՝ Շահ Աբասի դուստրը, սա ուներ երկու որդի. սրանք տրտնջացին շահից, թե ի՞նչ է անում այս խելագարը, որովհետև արյաց այս ազգի զորքը սպառեց: Օսմանցիք այս որ